ՏԱՐԵԳԻՐ

ICRC

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

Քարիկ Մերգուչևսկայա

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) չեզոք, անկողմնակալ և անկախ կազմակերպություն է, որը մարդասիրական պաշտպանություն և աջակցություն է տրամադրում զինված ընդհարումներից և բռնության այլ իրավիճակներից տուժած անձանց: 1992 թ.-ից ի վեր ԿԽՄԿ-ն մարդասիրական գործունեություն է ծավալում տարածաշրջանում աջակցելով հակամարտությունից տուժած անձանց, նպաստելով միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) տարածմանը և կիրարկմանը և հանդես գալով որպես չեզոք միջնորդ հակամարտության կողմերի միջև:

Երևանում ԿԽՄԿ պատվիրակության և Գորիսում ենթապատվիրակության միջոցով շարունակական աջակցություն ենք ցուցաբերում Ղարաբաղյան հակամարտության 2020-2023 թթ.-ի սրացումների հետևանքով տուժած անձանց: Շարունակել ենք իրագործել սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդման ծրագրեր: Սերտորեն համագործակցել ենք Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) հետ և աջակցել նրանց գործունեությանը, ինչպես նաև միավորել ենք մեր ջանքերը արձագանքելու հակամարտության սրացումներից տուժած քաղաքացիական բնակչության կարիքներին:

Սեպտեմբերի 19-ին ռազմական գործողությունների սրացումից հետո ԿԽՄԿ-ն ընդլայնել է իր աշխատանքի ծավալը ավելացնելով պաշտպանության, առողջապահության, դատաբժշկության և զինամթերքով աղտոտված տարածքների անվտանգության ոլորտներում մասնագիտացված անձնակազմ ահագնացող մարդասիրական կարիքներին արձագանքելու նպատակով: Մենք հիվանդանոցներին տրամադրել ենք անհրաժեշտ պարագաներ վնասվածքների, այդ թվում՝ ռազմական գործողությունների ժամանակ վիրավորվածների և սեպտեմբերի 25-ին վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետևանքով այրվածքներ ստացածների բուժման համար: Մենք օգնել ենք կազմակերպել անհապաղ բուժման կարիք ունեցող անձանց տարհանումը Հայաստան: Բացի այդ՝ աջակցել ենք մահացածների աճյունների տեղափոխմանը, ինչպես նաև աշխատել ենք դիարանների և հիվանդանոցների հետ նույնականացման գործընթացին օգնելու և աճյունների հետ արժանապատիվ վարվեցողություն երաշխավորելու նպատակով: ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ դրամական և նյութական աջակցություն ենք ցուցաբերել Ղարաբաղից Հայաստան տեղափոխված անձանց:

Շարունակել ենք աջակցել նաև հակամարտության սրացումների հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներին, իսկ 2022թ.-ի նոյեմբերից վերջիններիս կարիքների գնահատման արդյունքում մեկնարկել ենք Սատարման ծրագիրը, որն իրականացվում է ՀԿԽԸ-ի հետ համատեղ: Բացի այդ, Հայաստանի պատկան մարմիններին տրամադրել ենք տեխնիկական և նյութական, այդ թվում դատաբժշկական փորձագիտական աջակցություն՝ նպաստելու աճյունների հետ արժանապատիվ վարվեցողությանը և հակամարտության կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզմանը:

Շարունակել ենք այցելել հակամարտության սրացումների առնչությամբ պահվող այն անձանց, որոնց պահման փաստը հաստատվել է համապատասխան իշխանությունների կողմից: Այցելությունների ընթացքում մշտադիտարկել ենք նրանց հանդեպ վերաբերմունքը և ազատազրկման պայմանները, նպաստել ընտանիքների հետ կապի հաստատմանը: Իշխանությունների համաձայնությամբ՝ ազատազրկված անձանց կապը ընտանիքների հետ պահպանվել է Կարմիր խաչի նամակների, հեռախոսազանգերի, բանավոր և տեսաձայնագրված հաղորդագրությունների միջոցով:

Անհայտ կորած և ազատազրկված անձինք, աճյունների հետ վարվեցողություն

Ավելի քան **8,800 զանգ** և **այց** ենք ունեցել ԿԽՄԿ Երևանի և Գորիսի գրասենյակներում:

62 ընտանիք դիմել է ԿԽՄԿ-ին՝ իրենց անհայտ կորած հարազատների ճակատագիրը պարզելու խնդրանքով, և բացել որոնման հայտեր:

12 ընտանիք պարզել են իրենց հարազատների ճակատագրերը ԿԽՄԿ օգնությամբ:

303 անձ Հայաստանից դեռևս անհայտ կորած է համարվում հակամարտության 2020-2022 թթ. սրացումների հետևանքով՝ ընտանիքների կողմից ստացված դիմումների համաձայն: ԿԽՄԿ-ն շարունակում է աշխատել համապատասխան պատկան մարմինների հետ՝ ընտանիքներին հուզող հարցերին պատասխաններ տալու ուղղությամբ:

5 տեղեկատվական հանդիպում է կազմակերպվել անհայտ կորած անձանց ընտանիքների հետ Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերում:

4 տեղեկատվական հանդիպում է կազմակերպվել Արմավիրի և Լոռու մարզերում Դատաբժշկական գիտագործնական կենտրոնի (ԴԲԳԿ) ԴՆԹ լաբորատորիայի և Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

Ավելի քան **1,600 բանավոր, տեսաձայնային և գրավոր Կարմիր խաչի հաղորդագրություններ** են փոխանցվել հակամարտության առնչությամբ ազատազրկվածների ընտանիքներին: ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով այցելում է պահվող անձանց՝ նպաստելով հարազատների հետ նրանց կապի հաստատմանը և պահպանմանը:

2 գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից մասնակցել է Թբիլիսի քաղաքի՝ ISO 17025-ի կողմից հավատարմագրված ԴՆԹ լաբորատորիա իրականացված ուսումնական այցին:

18 թվային ջերմաչափ և լուսանկարչական ապարատ է նվիրաբերվել Երևանի ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիային՝ կարողությունների զարգացման և լաբորատոր փորձաքննությունների մեթոդաբանությունների բարելավման նպատակով:

2 գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից աջակցություն է ստացել՝ մասնակցելու Դատաբժշկական ԴՆԹ տվյալների բազայի վերաբերյալ քաղաքականության միջազգային գիտաժողովին և Դատաբժշկական ԴՆԹ-ի վերաբերյալ տարածաշրջանային վերապատրաստման դասընթացին:

30 ներկայացուցիչ Հայաստանի քննչական կոմիտեից, ազգային անվտանգության ծառայությունից, առողջապահության, պաշտպանության նախարարություններից, արտակարգ իրավիճակների ծառայությունից, ոստիկանությունից և Հայկական Կարմիր խաչի ընկերությունից մասնակցել է Արտակարգ իրավիճակների պատրաստվածությանը, ինչպես նաև անհետացումների կանխարգելմանը և մահացածների նույնականացումն առավելագույնի հասցնելուն նվիրված եռօրյա աշխատաժողովի:

1,970 դիապարկ է նվիրաբերվել ԴԲԳԿ-ին (1,840) և Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայությանը (130):

25 ներկայացուցիչ Հայաստանի փրկարար ծառայությունից և Հայկական Կարմիր խաչի ընկերությունից մասնակցել է արտակարգ իրավիճակներում աճյունների հետ վարվեցողության հարցում հետագծելիության և պատասխանատվության շղթայի վերաբերյալ վերապատրաստման դասընթացին:

4 **գենետիկ փորձագետ ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայից** մասնակցել է գենետիկական փորձաքննությունների համար նախատեսված ժամանակակից սարքավորումների կիրառման վերաբերյալ մասնագիտացված դասընթացի:

Քննչական կոմիտեի 11 ներկայացուցիչ մասնակցել է ԴՆԹ-ի վերաբերյալ դասընթացի:

6 սառը խցիկ է տեղադրվել Երևանի ԴԲԳԿ դիահերձարանում:

25,400 բժշկական ձեռնոց, 10,000 շեղբ, 1,750 նմուշառման փաթեթ, ԴՆԹ-ի անջատման 30 հավաքածու, SS սարքավորումների հինգ հավաքածու, սառը խցիկի բեռնաթափման վեց սայլակ, դիակի տեղափոխման 20 սայլակ, երկու սառցարան, 3,400 դիմակ, գենետիկական երկու անալիզատոր, լաբորատոր կահույք և այլ պարագաներ, ռեագենտներ են նվիրաբերվել ԴԲԳԿ լաբորատորիային:

3 սառնարանային կոնտեյներ է տեղադրվել Աբովյանի, Արմավիրի և Եղեգնաձորի դիահերձարաններում:

Հատուկ հարմարեցված սառնարանային բեռնախցիկով **ծանր բեռնատար մեքենա** է նվիրաբերվել ԴԲԳԿ-ին:

Փրկարար ծառայության **2 բեռնատար** համալրվել է սառնարանային բեռնախցիկներով:

Անհայտ կորածների միջազգային օրը հիշատակելու նպատակով օգոստոսի 30-ին Արմավիրի մարզում կազմակերպված ցուցահանդես:

Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն (ՀԱՀՍԱ)

1,022 անձ ստացել է հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցություն:

245 անձ մասնակցել է հակամարտությունների թողած հոգեբանական հետևանքների վերաբերյալ հանդիպումների, որոնք կազմակերպել ենք Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ համատեղ:

102 անդամ անհայտ կորածների **ընտանիքներից** հոգեբանական աջակցություն է ստացել տնայցերի կամ աջակցության խմբերի միջոցով:

354 խմբային ՀԱՀՍԱ հանդիպում է կազմակերպվել Հայաստանի տարբեր մարզերում՝ ներառյալ անհայտ կորածների ընտանիքների համար կազմակերպված 34 հանդիպում:

880 անձ, այդ թվում՝ վերջերս Ղարաբաղից Հայաստան տեղափոխված և Գեղարքունիքի, Տավուշի ու Վայոց Ձորի մարզերում վերաբնակեցված **285 անձ,** ստացել է ՀԱՀՍԱ աջակցություն ՀԿԽԸ խորհրդատուների կողմից՝ ԿԽՄԿ-ի հետ սերտ համագործակցությամբ:

20 անձ՝ հակամարտության առնչությամբ նախկինում ազատազրկված, ևս մասնակցել է ՀԱՀՍԱ հանդիպումներին:

133 անհատական հանդիպում է կազմակերպվել ՀԿԽԸ խորհրդատուների և ԿԽՄԿ ՀԱՀՍԱ թիմի կողմից:

54 բուժաշխատող Սյունիքի և Գեղարքունիքի մարզերից մասնակցել է ՀԿԽԸ-ի հետ համատեղ կազմակերպված աշխատաժողովներին սթրեսի կառավարման, ինքնատիրապետման և բռնության զոհ դարձած անձանց հետ հաղորդակցման հմտությունների վերաբերյալ:

96 ՀԱՀՍԱ մասնագետ, այդ թվում 35 մասնագետ գործընկեր ՀԿ-ներից և Հայաստանի պաշտպանության նախարարությունից, մասնակցել են ԿԽՄԿ-ի և Շվեդական Կարմիր խաչի կողմից կազմակերպված ՀԱՀՍԱ-ի արձագանքման վերաբերյալ եռօրյա համաժողովի՝ ուղղված անհայտ կորածների ընտանիքների, նախկին ազատազրկվածների և բռնության զոհ դարձած անձանց հետ հաղորդակցվելու ու ՀԱՀՍԱ աջակցություն ցուցաբերելու հմտությունների բարելավմանը:

ՀԱՀՍԱ խմբային հանդիպում անհայտ կորածների ընտանիքների հետ Արմավիրի մարզում:

Առողջապահություն

974 անձ, այդ թվում՝ առողջապահության ոլորտի մասնագետներ և հրշեջներ Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Արարատի մարզերի **66 համայնքներում** մասնակցել են առաջին օգնության հիմունքների թեմայով վերապատրաստման դասընթացին, որը կազմակերպվել է ՀԿԽԸ առաջին օգնության բաժնի կողմից ԿԽՄԿ-ի աջակցությամբ:

19 մենեջեր Տավուշի մարզի չորս հիվանդանոցից և Գեղարքունիքի մարզի մեկ հիվանդանոցից մասնակցել է ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված՝ Տուժածների զանգվածային հոսքի կառավարման թեմայով դասընթացին:

3 առողջապահական հաստատություն Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում իրենց անձնակազմերի համար կազմակերպել են տուժածների զանգվածային հոսքի կառավարման վերաբերյալ սիմուլյացիոն վարժանքներ:

20 հիմնական, հինգ դեղորայքային և հինգ ծախսանյութերի միավորներ միջգերատեսչական արտակարգ իրավիճակների հավաքածուից նվիրաբերվել են Հայաստանի առողջապահության նախարարությանը (ԱՆ)՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխված առավել մեծ թվով անձանց հյուրընկալած համայնքների բժշկական հաստատություններին տրամադրելու նպատակով՝ երեք ամսվա կտրվածքով 50,000 անձանց հիմնական առողջապահական կարիքները հոգալու համար:

192 աշխատող Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի շտապօգնության և անհետաձգելի բուժօգնության անձնակազմերից վերապատրաստվել է ԿԽՄԿ-ի կողմից անցկացվող ԿԽՄԿ-ԱՀԿ Անհետաձգելի բուժօգնության հիմունքներ թեմայով դասընթացի շրջանակում:

4 հիվանդանոց Ճամբարակ, Սիսիան, Գորիս և Կապան քաղաքներում համալրվել է գեներատորներով՝ ճգնաժամի պարագայում էներգիայի անխափան մատակարարումը երաշխավորելու նպատակով:

1 սառնարանային խցիկ է տեղադրվել ԱՆ կենտրոնական դեղատանը:

ԿԽՄԿ-ի, «Էրեբունի» բժշկական կենտրոնի, ինչպես նաև Հարվարդի համալսարանի բժշկության դպրոցի բժիշկների և ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքի Բեթ Իսրայել սարկավագի անվան բժշկական կենտրոնի համատեղ ուժերով ստեղծվել է **«Հայաստանի անհետաձգելի և աղետների բժշկության միջազգային ուսումնավարժական կենտրոնը»**:

20 բուժքույր և բժիշկ սահմանամերձ 12 առողջապահական հաստատություններից մասնակցել է Անհետաձգելի բուժօգնության վերաբերյալ երկշաբաթյա վերապատրաստման դասընթացի (BLS, ACLS, PALS, PHTLS):

146 աշխատող Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի շտապօգնության և **անհետաձգելի բուժօգնության անձնակազմերից** մասնակցել է Հիմնական կենսապահովման և Վնասվածքների նախահիվանդանոցային կենսապահովման դասընթացների՝ ԿԽՄԿ-ի, ԱՀԿ-ի և այլ դոնորների աջակցությամբ:

12 հիվանդանոց և մեկ առողջապահական կենտրոն Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արարատի և Սյունիքի մարզերում ստացել է արտակարգ իրավիճակների համար նախատեսված նյութեր՝ անհետաձգելի բուժօգնության ծառայությունների որակը բարելավելու նպատակով:

ԿԽՄԿ-ի աջակցությամբ Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակվել են անհետաձգելի բուժօգնության և ծառայությունների վերաբերյալ **ավելի քան 40 արձանագրություններ**, որոնք հաստատման նպատակով

«Անհետաձգելի բուժօգնության հիմունքներ» թեմայով դասընթաց Ջերմուկի առողջության կենտրոնի բուժաշխատողների համար:

Միջազգային մարդասիրական իրավունքի խթանում

Երևանում փորձագետների գլխավորությամբ անցկացված աշխատաժողովի շրջանակում Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի **3 բարձրաստիճան սպա** քննարկել են ժամանակակից զինված ընդհարումներում Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) մարտահրավերները:

8 սպա և դասախոսներ ՀՀԱԱԾ ՍԶ-ից իրենց գիտելիքներն են ամրապնդել ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված երկօրյա ընդլայնված աշխատաժողովի ընթացքում:

52 սպա և ենթասպա ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Կապանում և Գյումրիում կազմակերպված ԿԽՄԿ դասընթացների շրջանակներում:

4 բարձրաստիճան սպա Հայաստանի պաշտպանության նախարարությունից քննարկել է զինված ուժերում ԿԽՄԿ-ի աջակցությամբ ՄՄԻ ինտեգրման հեռանկարները:

ՀՀ ՊՆ Խաղաղապահ բրիգադի **16 սպա, ենթասպա և սերժանտ** տեղեկացել են ԿԽՄԿ-ի հանձնագրի, գործունեության, ինչպես նաև ՄՄԻ հիմունքների մասին:

86 կուրսանտ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայից մասնակցել է ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպմանը:

Մարտավարական օղակի **75 սպա, ենթասպա և պայմանագրային զինծառայող** մասնակցել է ՄՄԻ հիմունքների վերաբերյալ իրազեկման հանդիպման Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում:

30 բարձրաստիճան սպա Պաշտպանության նախարարությունից և գլխավոր շտաբից մասնակցել է ռազմական պլանավորման և գործողությունների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում ՄՄԻ-ի կարևորության շուրջ իրազեկման հանդիպման:

51 մասնակից մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համատեղ կազմակերպված 7-րդ տարածաշրջանային ամառային դպրոցին՝ տեղում և առցանց:

250 թեմատիկ տեղեկագրերի հավաքածու է տպագրվել ՄՄԻ վերաբերյալ հայերեն լեզվով՝ կրթական հաստատություններին և իրավասու մարմիններին տրամադրելու նպատակով:

Հիմնադրվել է **Միջազգային մարդասիրական իրավունքի և Մարդու իրավունքների միջազգային իրավունքի կրթահետազոտական հարթակ,** որը միավորելու է ՄՄԻ փորձագետներին, ոլորտի երիտասարդ մասնագետներին և ՄՄԻ-ով և հարակից իրավական հարցերով հետաքրքրված ուսանողներին:

13 գլխավոր խմբագիր հայկական լրատվամիջոցներից մասնակցել է պատվիրակության ղեկավարության գլխավորած փակ ճեպազրույցին՝ ԿԽՄԿ հանձնագրի, դերի և հակամարտության առնչությամբ տարածաշրջանում առկա հումանիտար հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման նպատակով:

11 ներկայացուցիչ ԶԼՄ-ներից մասնակցել է լրագրողների համար նախատեսված դասընթացի և Սյունիքի ու Վայոց Ձորի սահմանամերձ համայնքներում լրագրողական շրջայցի, որը ներառել է անհայտ կորածների և տեղեկացված լինելու իրավունքի, աճյունների կառավարման, պահվող անձանց հետ աշխատանքի և ընտանեկան կապերի վերականգնման վերաբերյալ ուսումնական մաս:

ԿԽՄԿ/Դավիթ Կիրակոսյան

Լրագրողների համար նախատեսված դասընթաց ԿԽՄԿ գրասենյակում:

Բնակավայրերի ջրամատակարարում

Դավիթ Մարոյան

Ղարաբաղից Տավուշի մարզի Չինարի գյուղ տեղափոխված ընտանիքներին նվիրաբերվել են ջրի բաքեր:

1 դպրոց Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում բարելավվել է խմելու ջրի հասանելիությունն ու սանիտարահիգիենիկ պայմանները՝ ԿԽՄԿ-ի կողմից երկու սանհանգույցների վերանորոգման արդյունքում:

Սյունիքի և Վայոց ձորի մարզերում վերանորոգվել է **2 դիահերձարան.** բարելավվել են լուսավորության, օդափոխության, կոյուղու համակարգերը:

Սյունիքի մարզի Գորիսի և Կապանի բժշկական կենտրոններում վերանորոգվել է **անհետաձգելի բուժօգնության 2 բաժանմունք**՝ բարելավելով գործառնության մակարդակը առօրյա պայմաններում և արտակարգ իրավիճակներում:

Բարելավվել են Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղի **տարեցների խնամքի 1 կենտրոնի** կենցաղային պայմանները, կանխվել է շինության հետագա կառուցվածքային վնասը՝ տանիքի վերանորոգմամբ՝ դյուրացնելով հետագայում նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացումը:

Սյունիքի մարզի Բարձրավան, Ներքին Խնձորեսկ և Խնածախ գյուղերի **3 բժշկական կենտրոններում** բարելավվել են մաքուր ջրի հասանելիությունը, սանիտարահիգիենիկ պայմանները, ինչպես նաև տանիքների ջրահեռացման համակարգերը:

Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոնին է տրամադրվել **1 սառնարան**՝ դեղորայքի պահպանման պայմանները բարելավելու նպատակով:

3 համայնքներ՝ Սյունիքի մարզի Նռնաձոր և Ալվանք գյուղերը և Տավուշի մարզի Չինարի գյուղը, բարելավել են ջրի հասանելիությունը՝ փականների, հորատանցքային պոմպի և ջրի բաքերի տրամադրման արդյունքում:

Տնտեսական աջակցություն

42 փոքր դրամաշնորհ է տրամադրվել Սյունիքի մարզի Սզնակ, Դիցմայրի, Նռնաձոր, Կաղնուտ և Շուրնուխ գյուղերում, **15 դրամաշնորհ՝** Գեղարքունիքի մարզի Տրետուք գյուղում:

33 շահառու սահմանամերձ համայնքներից մասնակցել է ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված բիզնես հմտությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացին:

20 տնային տնտեսություն, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, եկամտաբեր գործունեություն ծավալելու նպատակով ստացել են աջակցություն՝ փոքր դրամաշնորհների և մասնագիտական դասընթացների տեսքով:

12 տնային տնտեսություն, այդ թվում՝ անհայտ կորածների, պահվող անձանց և նախկինում պահվող անձանց խոցելի ընտանիքները, ստացել են դրամական աջակցություն՝ հրատապ կարիքները հոգալու համար:

27 տնային տնտեսություն Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղից օգտվել է ԿԽՄԿ-ի և ՀԿԽԸ-ի կողմից իրականացված «Կանխիկ գումար կենսապահովման համար» աջակցության ծրագրից:

37 տների վերականգնման նախագիծ է մեկնարկել հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց համար «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

2,325 ազնվամորու տնկի է բաշխվել Սյունիքի մարզի Բարձրավան գյուղի 14 ընտրված տնային տնտեսությունների, որոնք օգտվել են ազնվամորու աճեցման, ինչպես նաև կոմպոստի և վերմիկոմպոստի արտադրության վերաբերյալ տեխնիկական վերապատրաստման դասընթացից: Նրանց նաև տրամադրվել է **Կալիֆորնիական որդերի 14 փաթեթ, 112 փայտե պալետ, կոմպոստի արկղերը հավաքելու համար 14 գործիքակազմ, 2,000 լիտր ջրի բաք** և կաթիլային ոռոգման ամբողջական համակարգեր:

26 միրգ մթերող Տավուշի մարզից մասնակցել է կոմպոստի և վերմիկոմպոստի վերաբերյալ կարողությունների զարգացման դասընթացին, որից հետո նրանց տրամադրվել են կոմպոստի 16 արկղ և Կալիֆորնիական որդերի 13 փաթեթ:

52 տնային տնտեսություն Տավուշի մարզի Այգեպար գյուղից օգտվել է իրենց համապատասխան հողամասերի ոռոգումն ապահովող ոռոգման ջրանցքի կապիտալ վերակառուցումից:

Տավուշի մարզի Չինարի գյուղից 4 **թիրախային միրգ մթերողներին** տրամադրվել են արևային պանելներ, որպեսզի կարողանան **2 բարձրավոլտ ջրի պոմպ** է նվիրաբերվել Սյունիքի մարզի Նռնաձոր գյուղին՝ ապահովելով ոռոգման ջրի մատակարարում **80 հեկտար պտղատու այգիների**:

32,969 կգ ցորենի սերմացու է տրամադրվել Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Խնածախ, Վաղատուր և Խոզնավար գյուղերի **103 տնտեսության**:

181,800 կգ ցորենի սերմացու է տրամադրվել Գեղարքունիքի մարզի Սոթք, Տրետուկ և Կուտական գյուղերի **252 տնտեսության:**

6,395 անհատական սննդի փաթեթ, 16,117 հիգիենայի փաթեթ, 10,005 ծածկոց, 400 արևային լամպ, 160 էլեկտրական տաքացուցիչ, 110 տոննա ցորենի ալյուր է տրամադրվել ՀԿԽԸ-ին՝ 2023թ.-ի սեպտեմբերին Ղարաբաղից Հայաստան տեղափոխված անձանց շրջանում հետագա բաշխման համար:

440 կգ խմորիչ և 2,700 կգ աղ է տրամադրվել Որոտան, Դավիթ Բեկ, Ծավ և Բարձրավան համայնքների սահմանամերձ փոռատներին:

7,337 անձ՝ Ղարաբաղից Հայաստան տեղափոխված, ընդգրկվել է կանխիկ աջակցության երկու ծրագրերում, որոնք իրականացվել են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ ՀԿԽԸ-ի հետ համատեղ: Առաջին ծրագրով նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տրամադրվել է 50,000-ական դրամ (40,000 դրամ՝ բնակարանի վարձավճարի և 10,000 դրամ՝ կոմունալ ծախսերի համար), իսկ երկրորդ ծրագրի շրջանակում նոյեմբերին յուրաքանչյուր անձի տրամադրվել է 50,000 դրամ՝ ամենահրատապ կարիքները հոգալու համար:

Սյունիքի Բարձրավան համայնքի 14 տնային տնտեսության տրամադրել ենք ազնվամորու տնկիներ:

Զինամթերքով աղտոտված տարածքների անվտանգություն

ՀԿԽԸ-ի և ԿԽՄԿ-ի կողմից իրականացված նախագծի շրջանակում համայնքներում բաշխման նպատակով տպագրվել են ականների և ՊՊՄ ռիսկերի և անվտանգ վարքագծի վերաբերյալ ուսումնական ձեռնարկի **600 օրինակ** և **պաստառների 100 օրինակ**:

Մարդասիրական նշագրման նպատակով **266 պաշտոնական իրազեկող նշաններ**, պայթուցիկ մնացորդների ռիսկի վերաբերյալ իրազեկման տիկնիկային ներկայացման համար **ինը տիկնիկ** և բեմական սարքավորումներ, ինչպես նաև ուսումնական ձեռնարկի **300 օրինակ** նվիրաբերվել է Հումանիտար ականազերծման փորձագիտական կենտրոնին (ՀԱՓԿ):

ՀԱՓԿ-ի անձնակազմի 10 աշխատակից մասնակցել է պայթուցիկ մնացորդների ռիսկերի իրազեկման վերաբերյալ վերապատրաստողների համար եռօրյա դասընթացին:

Հայաստանի ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության **10 աշխատակից** մասնակցել է Սյունիքի մարզի Կապան քաղաքում անցկացված ՊՊՄ ռիսկերի վերաբերյալ աշխատաժողովին, որը կազմակերպվել է ԿԽՄԿ-ի, ՀԱՓԿ-ի և ՀԿԽԸ-ի կողմից:

10 ականազերծող ՀԱՓԿ-ից և **10 ականազերծող ու փրկարար ՀՀ ՊՆ-ից և ՆԳՆ-ից** մասնակցել է ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված Պայթունային վնասվածքների վարումը (ՊՎՎ) թեմայով երկօրյա դասընթացին: Դասընթացի բոլոր մասնակիցներին ԿԽՄԿ-ի կողմից տրամադրվել է **ՊՎՎ 20 ձեռնարկ և 20 առաջին օգնության հավաքածու:** Բացի այդ, ԿԽՄԿ-ի կողմից ՀԱՓԿ-ին է նվիրաբերվել **առաջին օգնության երկու պայուսակ:**

8 աշխատակից ՀԱՓԿ-ից, որոնք ընդգրկված են պայթունավտանգ զինամթերքի վտանգի (ՊԶՎ) մասին իրազեկման գործընթացում, մասնակցել են ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված աշխատաժողովին՝ դպրոցներում տիկնիկային ներկայացումների միջոցով ՊԶՎ-ի մասին իրազեկում իրականացնելու վերաբերյալ:

Համագործակցություն Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ*

1,358 շահառու օգտվել է հինգ սահմանամերձ մարզերում (Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի) ՀԿԽԸ-ի **56 կամավորի և յոթ առաջնորդի** կողմից մշակված և իրականացված **22 նախագծից:**

2023թ.-ի սեպտեմբերին **Ղարաբաղից Հայաստան տեղափոխված և տեղաբնակ 659 երեխա** հաճախել է ՀԿԽԸ –ի կողմից ԿԽՄԿ-ի աջակցությամբ Սյունիքի մարզի Տեղ, Գեղանուշ և Սյունիք, Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Մեծ Մասրիկ, Արարատի մարզի Մասիս, Կոտայքի մարզի Հրազդան համայնքներում և Երևանում իրականացվող ութ «Ժպիտների ակումբներ»:

12 դպրոցում՝ ընտրված Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի համայնքներից, գնահատվել է արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը ՀԿԽԸ-ի կողմից ԿԽՄԿ-ի հետ համագործակցությամբ: Համապատասխանաբար, ՀԿԽԸ-ն 12 դպրոցներին տրամադրել է **96 կրակմարիչ և 36 հրշեջ վահան՝** հակահրդեհային միջոցառումներն ամրապնդելու նպատակով:

1 սիմուլյացիոն վարժանք է իրականացվել ՀԿԽԸ-ի կողմից ՀԿԽԸ Երևանի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի **Աղետների արձագանքման երեք թիմերի մասնակցությամբ՝** Ստեփանավանի Լոռէ փրկարար ջոկատի հետ համագործակցությամբ:

16 հնգօրյա վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել ՀԿԽԸ-ի կողմից Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի, Սյունիքի (Կապան և Գորիս) սահմանամերձ մարզերում **Աղետների արձագանքման յոթ թիմերի կամավորների համար**, որոնց հաջորդել են ՆԳՆ Փրկարար ծառայության հետ համատեղ անցկացվող սիմուլյացիոն վարժանքներ:

157 աշխատակից և կամավոր ՀԿԽԸ-ի 12 մարզային մասնաճյուղերից և Երևանի գլխամասային գրասենյակից մասնակցել է ապահովության և անվտանգության կանոնների վերաբերյալ **73 ամփոփիչ հանդիպումներին**, որոնք նախատեսված էին հատկապես Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում հրատապ արձագանքման գործընթացում ընդգրկված անձանց համար:

80 կամավոր աղետների արձագանքման յոթ թիմերից աշխատել է հերթափոխով՝ ծառայություններ մատուցելով ամառվա սեզոնին Սևանա լճի հանրային լողափներում տեղակայված երեք կետերում՝ ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության խնդրանքով և վերջինիս հետ համագործակցությամբ:

11,472 աշխատակից և աշակերտ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի **12 դպրոցներից** մասնակցել է տարհանման վարժանքներին, որոնք հաջորդել են արտակարգ իրավիճակներում տարհանման, երկրաշարժի, հրետակոծության և գնդակոծության ժամանակ անվտանգ վարքագծի, ապահով սենյակիների կիրառման վերաբերյալ ՀԿԽԸ-ի կողմից իրականացված վերապատրաստման դասընթացներին:

2,771 ուսուցիչ, դպրոցականների ծնողներ և սահմանամերձ չորս մարզերի բնակիչ տեղեկացվել է ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների ռիսկերի և անվտանգ վարքագծի մասին ԿԽՄԿ-ի հետ համատեղ ՀԿԽԸ-ի կողմից իրականացված իրազեկման դասընթացների, համայնքի անդամների հետ հանդիպումների և տնայցերի միջոցով:

10 աշխատակից ՀԱՓԿ-ի անձնակազմից մասնակցել է պայթուցիկ մնացորդների ռիսկերի իրազեկման վերաբերյալ վերապատրաստողների համար եռօրյա դասընթացի:

1,999 աշակերտ սահմանամերձ չորս մարզերի 20 դպրոցներից մասնակցել է տիկնիկային ներկայացումների և թեմատիկ մրցույթների, որոնք իրականացվել են ՀԿԽԸ-ի կողմից ԿԽՄԿ-ի հետ համատեղ:

2 անվտանգության արկղ, 20 կրակմարիչ և մեկ անվտանգության համակարգ է տրամադրվել ՀԿԽԸ-ի կողմից՝ ԿԽՄԿ-ի աջակցությամբ, Վայոց Ձորի և Տավուշի սահմանամերձ մարզերի երկու մարզային մասնաճյուղերի՝ պասիվ անվտանգության միջոցառումները բարելավելու նպատակով:

Հեղի Առապետյան/ԿԽՄԿ

Փոքրիկ Միլենան ստացել է Ղարաբաղից Հայաստան տեղափոխված անձանց համար նախատեսված սննդի և հիգիենայի փաթեթները:

*ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ իրականացված այլ գործունեությանը ծանոթանալու համար տե՛ս տեղեկագրի մյուս բաժինները:

Մենք աջակցում ենք զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց ամբողջ աշխարհում՝ անելով հնարավորինը նրանց կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու և տառապանքը մեղմելու համար, հաճախ՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի մեր գործընկերների հետ համագործակցությամբ: Մենք նաև ձգտում ենք պաշտպանել մարդկանց զրկանքներից՝ մարդասիրական իրավունքը խթանելու և ամրապնդելու, ինչպես նաև համամարդկային մարդասիրական սկզբունքները պահպանելու միջոցով:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակություն
Հայաստանում
73/3 Նաիրի Զարյան փ.
0014 Երևան, Հայաստան
Հեռ.՝ +374 297415, erevan@icrc.org
Գլխավոր նկարը՝ Քնարիկ Սերոբյանի/ԿԽՄԿ
© ԿԽՄԿ, փետրվար 2024 թ.

facebook.com/icrcAm
twitter.com/icrcAm
instagram.com/icrc

ICRC

2024.2245/002